

**ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆԵՐՈՒՄ
(Գերմաներենի նյութի հիման վրա)**

Հատուկ անունների հոգնակի թվով օգտագործելու ոճը կարելի է հանդիպել և՛ գեղարվեստական գրականության մեջ, և՛ առօրյա խոսակցական լեզվում, որտեղ այն առավել հաճախ օգտագործվում է, երբ խոսքը վերաբերում է որևէ ընտանիքին ամբողջությամբ վերցրած, օրինակ՝

Für das Geld könnten dann die Müllberge weggeräumt werden, die Schulzes und Meiers und Aydins grundsätzlich hinterlassen und die außer den Rauchschwaden zum ständigen Ärgernis gehören. (Berliner Zeitung, 17.06.2000, S.25).

«Փողով հնարավոր կլիներ, այնուամենայնիվ, մաքրել աղբակույտերը, որոնք հիմնականում իրենց հետևից թողել էին Շուլցերը, Մայերները և Այդինները, և որոնք բացի այն, որ ծխի աղբյուր են նաև մշտական զայրույթի առարկա են հանդիսանում»:

Այս օրինակում Շուլցեր, Մայերներ, Այդիններ հոգնակի թվով դրված հատուկ անունները ցույց են տալիս այս ընտանիքների անդամներին ամբողջությամբ վերցրած: Սա այն հիմնական դեպքերից մեկն է, որ հատուկ է և՛ գերմաներենին և՛ հայերենին: Այստեղ կարելի է խոսել ոճական մի երևույթի մասին, որը արդեն համդես է գալիս որպես նորմա երկու լեզուներում էլ և նրա ոճական երանգը լեզվում գրեթե զրոյական է, այսինքն այս դեպքում կարելի է խոսել մի ոճի մասին, որը ավելի շուտ չեզոք ազդեցություն ունի լեզվում: Օրինակում խոսքը այն ընտանիքների մասին է, որոնք հեռանալուց հետո իրենց հետևից աղբակույտ են թողել, որը ծխում է և մշտական զայրույթի առարկա է հանդիսանում շրջապատի բնակչության համար:

Ոչ հայերենում, ոչ գերմաներենում սովորաբար հոգնակիով չեն օգտագործվում հատուկ անունները: Սակայն, կախված համատեքստից, դրանք

կարող են այդ նորմայից շեղվել և ծեռք բերել հավելյալ ոճական երանգավորումներ կամ արժեքներ: Ինչպես՝

Solche Schulzes rufen die Polizei, verderben anderen Schulzes den Abend, vermiesen den Wirten das Geschäft und ruinieren der Stadt den Ruf (kein Finne oder Schwede wird Urlaubsdias aus dem nächtlichen Berlin zeigen. (Berliner Zeitung, 20.07.1999, S.19).

«Այդպիսի Շուլցերը ոստիկանություն են կանչում, մյուս Շուլցերի երեկոն են փչացնում, փչացնում են պանդոկատերերի գործը և ստվեր գցում քաղաքի համբավի վրա (ոչ մի ֆինն կամ շվեդացի գիշերային Բեռլինից արձակուրդային սլայդներ ցույց չի տա)»:

Այս օրինակում հոգնակի թվով դրված Շուլց հատուկ անունը հավաքական իմաստով է օգտագործվել: Առաջին հայացքից կարելի է այն տպավորությունը ստանալ, որ խոսքը այս օրինակում այն մասին է, որ պանդոկում հավաքվածների բոլորի անունները Շուլց է, և այդ Շուլցերից մի խումբը պատճառ է հանդիսանում, որ ոստիկանությունը գա, որի հետևանքով փչանում է Շուլցերի մյուս խմբի երեկոն, պանդոկատիորոշ գործերը և ընդհանրապես քաղաքի համբավը: Մինչդեռ նախադասությունը իմաստային և ոճական տեսանկյունից վերլուծելիս կարելի է նկատել, որ այս դեպքում հոգնակի թվով դրված Շուլց հատուկ անունը որոշակի ոճական և իմաստային երանգով է հանդես գալիս, որի իմաստը այն է, որ Շուլց անվան տակ հեղինակը հասկանում է ընդհանրապես պանդոկում հավաքված բոլոր մարդկանց: Նախադասության վերլուծության ժամանակ նկատում ենք սակայն, որ հոգնակի թվով դրված առաջին հատուկ անունը ավելի շուտ բացասական ոճական երանգ է ստացել, քանի որ օրինակից այն տպավորությունն ենք ստանում, որ իրենց գործունեության հետևանքով առաջին Շուլցերը փչացրել են մյուս Շուլցերի երեկոն և պանդոկատերերի գործը, սակայն իրականում առաջին Շուլցերը ավելի դրական կերպարներ են հանդիսանում: Նրանք, դեմ լինելով պանդոկներում տիրող անառողջ մթնոլորտին, ոստիկանություն են կանչում, որը ավելի շուտ կարգ ու կանոնի և բարոյականության երաշխիք և խորհրդանիշ՝ կարելի է դիտել: Դա, սակայն, ցանկալի չի դիտվում այն մարդկանց կողմից, որոնք սովոր են իրենց վարքով խանգարել մյուսների

հանգիստը, դեմ գնալ հասարակության կողմից ընդունված նորմերին: Պարզ է նաև, որ պանդուկատերերը իրենց եկամուտները մեծացնում են շատ դեպքերում հենց նման մարդկանց հաշվին, որոնք շատ են խմում կամ ընդհանրապես շատ են ծախսում: Այդ իսկ պատճառով էլ մարդիկ, որոնք ոստիկանների միջոցով փորձում են կարգ ու կանոն հաստատել և որոնք, տրամաբանորեն, պետք է դրականորեն ներկայացվեն, դիտվում են որպես բացասական մարդիկ, որովհետև նրանք իրենց գործունեության միջոցով փչացնում են մյուսների երեկոն և գործը ու վնասում քաղաքի ծեռք բերած համբավին: Այս նախադասության մեջ առկա է այն ոճական հնարքը, որը կոչվում է նվազասույթ, այսինքն քիչն ասելով հեղինակը հասկացնել է տալիս շատը:

Wir einfachen Meiers und Müllers, Schröders und Göbels müssen uns dagegen wohl damit abfinden, ohne Glanz und Gloria unser Irdenleben zu fristen. Doch halt, unser Wirtschaftssystem ist bekanntlich sehr flexibel. (Mannheimer Morgen, 30.12.1989, o.S.).

«Մենք հասարակ Մայերներս և Մյուլլերներս, Շրյոդերներս և Գյոբելներս ստիպված ենք հաշտվել այն բանի հետ, առանց փառք ու պատվի մեր երկրային կյանքը քարշ տալ: Բայց կաց, մեր տնտեսական համակարգը ինչպես հայտնի է շատ շարժունակ է»:

Այս նախադասությունում հոգնակի թվով դրված Մայերներ, Մյուլլերներ, Շրյոդերներ և Գյոբելներ հատուկ անունները ցույց չեն տալիս միայն կոնկրետ այդ անձանց կամ նրանց ընտանիքներին և կամ հարազատներին, այլ խորհրդանշում են բազմաթիվ այն հասարակ մարդկանց ընդհանրապես, որոնք ստիպված են հաշտվել իրենց անփառունակ և անպատվաբեր կյանքի պայմանների հետ, մույնիսկ այն դեպքում, որ երկրի տնտեսական համակարգը թույլ է տալիս նրանց ավելին ակնկալել և հայտնի է իր հարմարվողականությամբ և շարժունակությամբ: Այս նախադասությունում հանդես եկող հոգնակի թվով դրված վերոհիշյալ հատուկ անունները համատեքստից կախված ստացել են հավաքական իմաստի նոր երանգ, որը գալիս է մինևույն «հասարակ» ածականի ներքո խմբավորված հատուկ անունների թվարկումից: Այս թվարկումը համատեքստին փոխանցում է մի ընդհանրացնող ոճական երանգ, այն է՝ բոլոր այն մարդիկ, որոնք նման են հասարակ ապրող

Մայերներին, Սյուլլերներին, Շրյոդերներին և Գյոբելներին ունեն միևնույն ճակատագիրը և պետք է հաշտվեն իրենց կյանքի պայմանների հետ:

Um aus dem Zustand, wo jeder als Einsiedler für sich produziert, heraus und zum Austausch zu gelangen, "wende ich mich", sagt Herr Proudhon, "an meine Mitarbeiter in verschiedenen Tätigkeitszweigen". Ich habe also Mitarbeiter, die alle verschiedenen Beschäftigungen obliegen, ohne daß wir darum, ich und alle anderen-immer nach der Voraussetzung des Herrn Proudhon,- aus der vereinsamen und wenig sozialen Stellung der Robinsons herausgetreten wären. (M.P. Brandes, Praktikum für die deutsche Stilistik, Moskau 1966, S. 94, aus dem Werk von K. Marx "Das Elend der Philosophie).

«Որպեսզի վիճակից, որտեղ յուրաքանչյուրը որպես մենակյաց իր համար է արտադրում, դուրս գալ և փոխանակման հասնել, ես դիմում եմ,- ասում է պարոն Փրուդոնը,- իմ տարբեր գործունեության ճյուղերի աշխատակիցներին: Այսպիսով ես ունեմ աշխատակիցներ, որոնք բոլորը ջանասիրությամբ զբաղվում են տարբեր աշխատանքներով, առանց այն, որ մենք այդ միջոցով, ես և մնացած բոլորը, միշտ ըստ պարոն Փրուդոնի ենթադրության, - Ռոբինզոնների միայնակ և առավել նվազ սոցիալական վիճակից դուրս եկած լինեինք»:

Այս օրինակում հոգնակի թվով հանդես եկող *Ռոբինզոններ* հատուկ անունը չի վերաբերում կոնկրետ որևէ մեկին, այլ հոգնակի թվով դրված է որպես ընդհանրացնող մի խորհրդանիշ այն բոլոր մարդկանց համար, որոնք թեև օրնիրուն ջանասիրաբար աշխատում են, փորձում են ստեղծել ինչ-որ բաներ իրենց սոցիալական վիճակը բարելավելու և միայնակության զգացումից դուրս գալու համար, սակայն արժանանում են այն նույն բախտին,որին ճակատագիրը արժանացրել էր նավաբեկության ենթարկված և միայնակ անմարդաբնակ կղզու ափ նետած անգլիացի գրող Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» արկածային վեպի հերոս Ռոբինզոնին, որը աշխատում էր միայնակ կարգավորել իր կյանքը, փորձելով ստեղծել տնտեսություն, պահել տնային կենդանիներ, և որովհետև միայնակ էր, ապա շատ հաճախ անհաջողությունների էր մատնվում իր նախածեռնություններում, կյանքի պայմանների բարելավումը շատ դանդաղ ու դժվարությամբ էր ընթանում:

Հայերենում, օրինակ, կախված այն բանից, թե հատուկ անունը ինչ վերջավորություն է ստանում երբեմն կարելի է ասել, թե ինչ երանգ կարող է ձեռք բերել համատեքստում տվյալ հատուկ անունը: Օրինակ՝ *ենք* հոգնակիա-կերտ վերջածանցի միջոցով կազմված հատուկ անունները ցույց են տալիս որևէ ընտանիք, գերդաստան կամ ընկերական շրջապատ, խմբակցություն ամբողջությամբ վերցրած¹: Օրինակ, եթե ասում ենք, -Արմենենք կամ Ռուբենենք եկան, ապա հասկանում ենք, որ գալիս են կամ Արմենենց, Ռուբենենց ընտանիքները, կամ էլ տվյալ անձինք՝ իրենց բարեկամական և կամ էլ ընկերական շրջապատի հետ միասին: Իսկ երբ հատուկ անունների հետ համդեմ է գալիս *ներ* հոգնակիակերտ վերջածանցը, ապա տվյալ դեպքում հատուկ անունը ավելի շուտ ձեռք է բերում ինչ-որ դրական կամ բացասական հատկանշի արժեք: Օրինակ՝ եթե ասում ենք *Արմենենք կամ Ռուբենենք միշտ էլ եղել են*, ապա այս դեպքում կարող ենք հասկանալ այն դրական կամ բացասական հատկանիշները, որոնցով օժտված են կամ օժտված են եղել կոնկրետ այդ անունները կրող անձինք: Այդ հատկանիշները իհարկե կարող են շատ տարբեր լինել և այս դեպքում շատ կարևոր է այն հանգամանքը, որ կամ ընթերցողին, կամ էլ խոսակցին պարզ լինեն այդ հատկանիշները, որոնց ուղղակի նշելու փոխարեն նշվում են այդ հատկանիշները կրող անձանց հատուկ անունները: Այս դեպքում խոսքը որոշ չափով, կարելի է ասել, կոդավորված (նշակարգված) տեղեկույթի մասին է, և եթե հաղորդակիցներից մեկը կամ ընթերցողը նախապես չի տիրապետում այդ կոդին (նշակարգին), ապա հաղորդակցությունը կարող է թերի լինել, կամ թյուրիմացության հանգեցնել իր յուրատիպության պատճառով. «Եթե այն լեզվական միջոցները, - գրում է Ի. Ռ. Գալպերինը, - որոնց միջոցով փոխանցվում է պաշտոնական, թերթային, գիտական ոճի ասույթների բովանդակությունը հեշտ է վերծանել, և այդ իսկ պատճառով դրանք առավել կամ նվազ չափով կանխատեսելի են, ապա գեղարվեստական գրականության ոճի արտահայտչամիջոցները տեղեկությունը ստացողի

¹ Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 1989, էջ 59:

ուշադրությունը գրավում են իրենց յուրօրինակությամբ, փոխալսմանավոր-վածության անմխաստիպ համակարգով»²: Օրինակ՝

«Կոմսն ու գործարանատերը սկսեցին խոսել քաղաքականությունից: Նրանք կանխագուշակում էին Ֆրանսիայի ապագան: Մեկը հավատում էր, որ դ՛Օռլեաններ կհայտնվեին, մյուսը՝ որ անծանոթ մի փրկիչ, մի հերոս, որը կհայտնվեր խորը հուսալքման պահին, մի Դյու Գեկլեն, ժամնա դ՛Արկ միգուցե կամ մի այլ Նապոլեոն առաջին (Մոպասան, Ֆրանսիական պատմվածքներ և նովելներ, Երևան, 1982)»:

Այս նախադասության մեջ նկատի են առնվում դ՛Օռլեանների, Դյու Գեկլենի, ժամնա դ՛Արկի և Նապոլեոն առաջինի այն դրական հատկանիշները, որոնց շնորհիվ Ֆրանսիան դուրս եկավ զանազան ճգնաժամային իրավիճակներից: Եթե ընթերցողը կամ հաղորդակցության մասնակիցներից որևէ մեկը չգիտի, թե ովքեր են ընդհանրապես եղել դ՛Օռլեանները, Դյու Գեկլենը, ժամնա դ՛Արկը և Նապոլեոն առաջինը, և ինչ հատկանիշներով են օժտված եղել այդ անձինք, ապա կարող է առաջանալ փոխանցվող ասության ոչ լիարժեք ընկալում:

Հայերենի հոգնակիակերտ վերջածանցների հետ կապված վերը նշված այս տարբերությունները իհարկե գերմաներենում միևնույն ձևով չեն արտահայտվում: Գերմաներենում շատ բան կախված է հենց համատեքստից կամ կոնկրետ ընտրված հատուկ անուններից: Գերմաներենում հատուկ անունները ստանում են -s հոգնակիակերտ վերջածանցը, և միայն այս վերջածանցի միջոցով իհարկե արդեն հնարավոր չէ նախապես հասկանալ, թե ինչ իմաստային երանգ է ստանում այս կամ այն հոգնակի թվով դրված հատուկ անունը: Ս. Հարությունյանի «Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ»-ում ասվում է, որ հատուկ անունները սովորաբար հոգնակիով չեն օգտագործվում: Եթե ազգանունները օգտագործվում են հոգնակի թվով, ապա նրանք ցույց են տալիս ընտանիքին ամբողջությամբ վերցրած, օրինակ՝

² И. Р. Гальперин, О понятиях "стиль" и "стилистика", Вопросы языкознания, Москва, 1973, N 3, стр.24.

Սակայն մեր կարծիքով հատուկ անունների համար առաջադրված այս ձևակերպումը ամբողջապես չի արտահայտում այն բոլոր հնարավորությունները, որ առաջանում են, երբ գերմաներենում ինչպես նաև հայերենում հատուկ անունները դրվում են հոգնակի թվով: Կարծում ենք, որ այն լրացնելու կամ վերածակերպելու անհրաժեշտությունը կա, քանզի վերը բերված օրինակների հոգնակի թվով դրված հատուկ անունները մեծամասամբ արտահայտում են ոչ թե կոնկրետ մարդկանց ընտանիքների, այլ ավելի շուտ հավաքական իմաստ և, համապատասխանաբար, իրենց մեջ արտահայտելով որոշակի հատկանիշներ կամ խորհրդանիշներ, համատեքստին հաղորդում են անհրաժեշտ իմաստային և ոճական նրբերանգներ:

Գեղարվեստական գրականության մեջ հեղինակները, շատ հաճախ, հոգնակի թվով դնելով հատուկ անունները, իրենց ստեղծագործություններին հաղորդում են այն երանգը, որը խոսակցական լեզվին է հատուկ, դրանով իսկ փորձելով ընթերցողին ավելի մոտեցնել այն իրականությանը կամ ստեղծել այն տպավորությունը, որը կարելի է ստանալ բանավոր խոսքում: Սակայն գերմաներեն օրինակների վերլուծությունից կարելի է ամել այն եզրահանգումը, որ հոգնակի թվով հատուկ անունների օգտագործումը, նամանավանդ, գեղարվեստական ստեղծագործություններում ինչու չէ նաև առօրյա խոսակցական լեզվում բացի իմաստային որոշակի երանգ ստանալուց, ունի նաև որոշակի ոճական երանգ: Այս երևույթը ավելի շուտ հատուկ է համեմատաբար ավելի բարձր ոճին: Թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում հոգնակի թվով դրված այն հատուկ անունները, որոնք արտահայտում են որևէ ընտանիք ամբողջությամբ վերցրած, հիմնականում պատկանում են առօրյա խոսակցական ոճին, իսկ այն հոգնակի թվով դրված հատուկ անունները, որոնք արդեն արտահայտում են որևէ հատկանիշ, խորհրդանշում են ինչ-որ բան կախված գրականության, մշակույթի, պատմության կամ որևէ ասպարեզում իրենց ունեցած դիրքից, և հանդես են գալիս հավաքական իմաստով: Այս ոճական հնարքը ավելի հաճախ կարելի է հանդիպել գրական-գեղարվեստական ոճում, քանզի մարդիկ, որոնք

³ Տե՛ս Մ. Լ. Գարությունյան, Գերմաներենի քերականության համառոտ ծեռնարկ, Երևան, «Նաիրի», 1999, էջ 36:

օգտագործում են այդ հատուկ անունները, փոխանցելով նման դեպքերում ստեղծագործությանը կամ խոսքին համեմատաբար ավելի բարձր ոճ, իրենք ևս պատկանում են հասարակության համեմատաբար ավելի բարձր և, ամենակարևորը, կրթված շերտերից մեկին: Այդ է նաև պատճառներից մեկը, որ այս ոճը կարելի է ավելի հաճախ հանդիպել գրական-գեղարվեստական ստեղծագործություններում ինչպես նաև գրական երկխոսությունների կամ բանավեճերի ժամանակ:

Նորմայից կատարվող վերոհիշյալ շեղումը՝ հատուկ անունների հոգնակի թվով կիրառելը, հիմնականում հետապնդում է մի նպատակ, այն է՝ այս կա՛մ այն հանրածանոթ գրական կերպարին բնորոշ առանձնահատկությունները նկատի ունենալով, բնութագրել այդ մարդկանց, որոնց նույնպես տիպական են տվյալ գրական հերոսի բնավորության գծերը, արտաքինը, վարվելակերպը և այլն, դրանով իսկ ավելի մատչելի ու ցայտուն դարձնելով որևէ անձնավորության ճանաչելը, նրան բնորոշ գծերի ընկալումը⁴:

Վերը թվարկված օրինակների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ հատուկ անունները հոգնակի թվով հանդես գալուց ոչ միայն ցույց են տալիս որևէ անձնավորության ընտանիք, այլ կարող են ունենալ բազմաթիվ այլ իմաստային և ոճական նրբերանգներ: Այդ իսկ պատճառով էլ կարծում ենք, որ ստորև բերվելիք ձևակերպումը հատուկ անունների հոգնակի թվով հանդես գալու ժամանակ առաջացող իմաստային և ոճական դաշտերի փոփոխության և նրբերանգների մասին ավելի ամբողջական է արտացոլում այդ երևույթը:

Հատուկ անունները հոգնակի թվով հանդես գալուց համատեքստում կարող են ցույց տալ որևէ մեկի ընտանիքը, ինչպես նաև ընդհանուր ծանոթներին, բարեկամներին, իսկ որոշ դեպքերում էլ նաև հանդես գալ ավելի շուտ ածականի պաշտոնով՝ ցույց տալով օգտագործվող հատուկ անունները կրող մարդկանց հատկանիշները, հանդես գալ որպես խորհրդանշող հասկացություններ՝ համատեքստին հպմապատասխանաբար փոխանցելով առավել ընդգծված իմաստային և ոճական երանգներ:

⁴ Ռ. Սկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992, էջ 75:

Հատուկ անունների ոճական առանձնահատկությունները առավել ցայտուն երևում են, երբ տվյալ խոսքի մասերը դիտվում են որևէ համատեքստում, այլ ոչ համատեքստից դուրս, քանզի երբեմն հենց համատեքստից է կախված, արդյոք տվյալ խոսքի մասը այդ համատեքստում կստանա տվյալ ոճական երանգը թե ոչ: «Լեզվի միավորը, - գրում է Վ.Ի. Կոդուխովը,- հայտնվելով համատեքստում, դառնում է նրա մասը: Որպես համատեքստի տարր, այդ միավորը մյուս համատեքստային միավորների հետ միասին իրականացնում է լեզվական համակարգը և արտահայտում է կոնկրետ իմաստ: Հետևաբար՝ լեզվական միավորը և համատեքստը փոխկապակցված են: Համատեքստում կարող են իրականանալ արդեն գոյություն ունեցող միավորներ՝ իրենց իմաստներով, կարող են առաջանալ նոր միավորներ և նոր իմաստներ»⁵: Մեր կողմից կարող ենք ավելացնել, որ համատեքստում կարող են ոչ միայն ստեղծվել նոր միավորներ և իմաստներ, այլ նաև գոյություն ունեցող միավորները կամ իմաստները կարող են ձեռք բերել հավելյալ ոճական երանգավորում:

Ամփոփենք ասվածը: Հատուկ անունների օգտագործումը հոգնակի թվով, խոսքի մեջ հնարավորություն է տալիս. ա) ավելի ընդարձակել նրանց իմաստային դաշտը, նրանց հաղորդել որոշակի ոճական երանգներ, բ) հատուկ անունները, գրավոր և բանավոր խոսքում հանդես գալով հոգնակի թվով, արտահայտում են որոշ կողավորված տեղեկույթ, որի ոճական առանձնահատկությունները փոխադարձ հարաբերության մեջ են համատեքստի մեջ: Այս ոճական երանգները լսողի կամ ընթերցողի համար պարզ են լինում, երբ նրանց համար պարզ է լինում տեքստի ոճական կողավորումը:

⁵ В.И. Кодухов, Контекст как лингвистическое понятие, "Языковые единицы и контекст", Л., 1973, стр.20.